

ՎԱԼԵՐԻ ՄԻՐՁՈՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի
պրոֆեսոր, փիլիսոփայական
գիտությունների դոկտոր

ՎԻՃԱՐՎԵՍ. ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ՄԿՁԲՈՒՆՔ

Վիճարվեստը՝ որպես մշակույթի տարր

Վստահաբար կարելի է ասել, որ բանավեճը՝ ինչ-որ հարցի շուրջ տարբեր կարծիքների բախումը, որպես երևույթ, առաջացել է դեռևս մարդկության արշալույսին, երբ բանական արարածն արդեն կարողացել է ձևակերպել և ուրիշներին հաղորդել սեփական մտքերը: Իսկ քանի որ ամեն մի «ուրիշ» բնավ էլ պատրաստակամ չէ մյուսի տեսակետն անվերապահորեն ընդունելու (ինչպես որ այսօր է. այս առումով մարդու էությունն անփոփոխ է մնում), ուստի մտքերի բախումը, առաջարկների ընդհարումը, քննարկումն ու վեճը հանրային կյանքից անբաժան են եղել: Նաև արտացոլվել են հասարակական գիտակցության մեջ. անհիշելի ժամանակներից մեզ են հասել դատողություններ, կարծիքներ, գնահատականներ միմյանց լսելու, հասկանալու կարևորության մասին կամ ընդհակառակը՝ վիճաբանության հետևանքով մարդկանց գժովելու, պառակտվելու վերաբերյալ:

Իհարկե, «վիճաբանության արվեստ» բնութագրումը ենթադրում է ոչ թե սոսկ ժողովրդական բանահյուսության վկայակոչում կամ էլ կցկտուր դատողությունների և կարծիքների ամփայտության պարզ արձանագրում, այլ բուն վիճաբանության գիտական վերլուծություն, կուտակված նյութի տեսականացում, որոշակի օրինաչափությունների պարզաբանում և, վերջիններիս հիման վրա, համապատասխան վարքականոնի մշակում: Դրանից բացի, վիճարվեստի ձևավորման համար անհրաժեշտ է հանրային պատվեր, այսինքն՝ հանրային կյանքը պիտի այնքան հասունանա, որ հասարակությունը ներքնապես շահագրգռված լինի բանավիճելու գիտության և արվեստի մասին: Իսկ այդ հասունացումն ամենից առաջ սոցիալ-քաղաքական բնույթի է՝ պետությունը, քաղաքական վերնախավը, իշխող դասակարգերը պիտի պատրաստ լինեն դրան, ապահովված լինի ազատորեն սեփական տեսակետն արտահայտելու և օրինավոր միջոցներով պաշտպանելու իրավունքը: Հասկանալի է, որ բնույթաբանության պայմաններում վիճարվեստը չի կարող գոյատևել, ավելի ստույգ՝ կարող է լինել լույս դրանմանակումը շողոքորթության, ջատագովության, իշխողների փառաբանության ձևերով: Երբ կայսր Ներոնը կարծիք էր հարցնում իր ասմունքի կամ երգեցողության մասին, որևէ գիտակ կարո՞ղ էր այլ կերպ վարվել, դուրզինչ վիճարկել ներքողական կարծիքները: Կամ ո՞վ կարող է վստահաբար հայտարարել, թե իբր Ջորդանո Բրունոն լիարժեք հնարավորություն ուներ

անկաշկանդ բանավիճելու ինկվիզիցիայի վերնախավի հետ, իսկ այդ բանավեճ-դատավարությունը կարող էր ունենալ անաչառ իրավարար:

Բանավեճի մասին կցկտուր պատկերացումներն ու դատողությունները տեսական ընդհանրացման, որպես գիտություն և արվեստ կայանալու բարերար հիմք ստացան մ.թ.ա. V դարի Հին Հունաստանի քաղաք-պետություններում, ամենից առաջ դրանց կառավարմանը բնորոշ անմիջական ժողովրդավարության շնորհիվ, երբ ամեն հասուն քաղաքացի անմիջականորեն մասնակցում էր պետության կառավարմանը, կարող էր ամեն մի հարցի, օրինագծի, պաշտոնյայի գործունեության առթիվ ազատորեն ելույթ ունենալ, ուստի նաև հակառակվել այլոց կարծիքին, բանավիճել անգամ պետության բարձրագույն պաշտոնյաների հետ: Կար մի վճռորոշ գործոն ևս. դատարանում ամեն հայցվոր և ամբաստանյալ պարտավոր էր անձամբ ելույթ ունենալ, հիմնավորել մեղադրանքը կամ անմեղությունը, ապացուցել և հակաճառել, փաստարկել և հակափաստարկել: Եվ այս պայմաններում, նախապես հույն սոփեստների, ապա հրապարակ իջած հույն, հետագայում նաև հռոմեացի մեծ ճարտասանների ջանքերով ձևավորված ու զարգացած ճարտասանության (հռետորական արվեստ) շրջանակներում մշտական տեղ գտավ վիճաբանության արվեստը:

Այդուհանդերձ, անգամ դարեր անց ստիպված ենք արձանագրելու, որ վիճարկեստի հանդեպ վերաբերմունքը բավական հակասական է: Բացասաբար տրամադրվածները, բանավեճը գրեթե նույնացնելով (ցավոք, իրականում նման նույնացման որոշ հիմք կա) առտնին վեճի, խոսքակռվի, կողմերի փոխադարձ մեղադրանքի, ամուլ հակաճառության, միմյանց բացարձակապես չլսելու տրամադրվածության հետ, չեն ընդունում նաև դրա քաղաքակիրթ վարման, արգասավոր ընթացքի հնարավորությունը, առհասարակ բանավեճի, ուստի և դրան վերաբերող սկզբունքների ու կանոնների իմացության և գործադրման կարևորությունը: Այս մարդիկ պարզապես նույնացնում են վիճարկեստը և սոփեստությունը, ինչը բնավ էլ նոր երևույթ չէ: Դրա ավանդույթը սկզբնավորել են Սոկրատեսը, Պլատոնը և Արիստոտելը: Նրանց համար «լոգիկան» և «դիալեկտիկան» են ճշմարտությունը պարզելու միջոցները, իսկ «վիճարկեստը» (էրիստիկա) և «սոփեստությունը» կեղծ, խաբեական, անբարո միջոցներ են, որոնցից օգտվողը ոչ թե ճշմարտությունն է ցանկանում բացահայտել, այլ ամեն կերպ հաղթանակել վեճում:

Այս ավանդական մոտեցման հունով, Արթուր Շոպենհաուերը, ձեռնամուխ լինելով վիճարկեստին նվիրված «Էրիստիկա» գրքի շարադրանքին, հենց առաջին էջերում տարանջատում է «տրամաբանությունը» (լոգիկան) և «դիալեկտիկան»՝ որպես «միանգամայն տարբեր հասկացություններ»: Առաջինը մտածողության մասին գիտություն է, երկրորդը երկու անձանց համատեղ մտածողությունն է, որն անխուսափելիորեն վերածվում է մտքերի բախման: Շոպենհաուերի համար աներկբա է մի բան. ամեն ոք իր կարծիքը համարում է միակ ճշմարիտը, ուստի և ուրիշի ոչ նույնաբնույթ կարծիքը լսելիս նա ոչ թե իր տեսակետն է փորձում վերանայել, վերաքննել,

այլ մեկեն ուրիշինն է ձգտում հերքել: Ահա թե ինչու Շոպենհաուերն անգամ հարկ է համարում առաջարկել «էրիստիկական դիալեկտիկա» եզրը¹:

Սկզբունքորեն սա ընդունելի բնութագիր է: Եթե, իսկապես, սեփական մտածողության շրջանակներում այս կամ այն բանի մասին մտորելիս մենք բավարարվում ենք հասկացությունների ներքին հարաբերակցությամբ, պատճառահետևանքային կապերով, տրամաբանության օրենքներով և այլն, ապա մեկ ուրիշին համոզելիս դա արդեն անբավարար է. հարկավոր է դիալեկտիկական ճկունություն, տրամաբանության իմացության գործադրում՝ դիմացինին որևէ բան ապացուցելու, որևէ բանի ճշմարտության մեջ համոզելու համար: Դե իսկ եթե բանավիճում ենք փորձված իմաստակի հետ, ապա «էրիստիկական դիալեկտիկայի» գործադրումը միանգամայն տեղին է:

Բայց հայոց լեզուն շատ ավելի լայն հնարավորություն է ընձեռում տարբերակելու երևույթները: Ասելով «վիճաբանության արվեստ» (համառոտ՝ «վիճարվեստ»)՝ նկատի ունենք հենց «էրիստիկան»: Իսկ բուն երևույթի տարբեր վիճակները հրաշալի արտահայտվում են «բանավեճ», «վիճաբանություն» և «վեճ» բառերով:

«**Բանավեճ**» որևէ հարցի, տվյալ դեպքում՝ առաջադրված խնդրակի (թեզիս) էության վերաբերյալ կողմերի դատողությունների համադրումն է տրամաբանության շրջանակներում, գիտականության չափանիշներով, իմաստականության բացառմամբ, այլ կերպ ասած՝ «բանավեճը» վեճ է «բանին»՝ լոգոսին ենթարկվելով: «Վիճաբանություն» բառի մեջ, ինչպես տեսնում ենք, բաղադրիչները տեղերը փոխել են, «վեճը» դարձել է գերադաս, «բանը» (լոգոս-տրամաբանությունը)՝ ստորադաս:

«**Վիճաբանությունը**» մարդկանց խոսքային հաղորդակցման այն վիճակն է, երբ կողմերն աստիճանաբար հեռանում են «բանից», մոռանում «բանը», շեղվում, տեղապտույտ տալիս, ապա սկսում միմյանց մեղադրել գոյացած փակուղու համար: Վիճաբանությունը շարունակման երկու ճանապարհ է ունենում. եթե կողմերը զգաստանում են, բարի կամք դրսևորում, ձգտում համատեղ քննարկման, ապա հնարավոր է վերադարձ բնականոն բանավեճի: Ցավոք, սա բնավ էլ հաճախադեպ չէ. զրուցակիցները բորբոքվում են, անձնական բնույթի մեղադրանքները խանգարում են ներողամտություն և հանդուրժողականություն դրսևորելու, այլոց ներկայությունն էլ, որպես կանոն, բացասաբար է անդրադառնում: Այնպես որ՝ վիճաբանությունը սովորաբար վերածվում է վեճի:

«**Վեճ**» արդեն ոչ մի ընդհանրություն չունի տրամաբանության հետ («բանը» արտաքսվել է բառից). սա անձնական վիրավորանքների փոխադարձ տարափ է, անցյալի տհաճ հիշողությունների թարմացում («Էլ անպատիվ, անկարգ խոսքեր, // Էլ հին ու նոր, էլ հեր ու մե՞ր...»^{*}), արժանավոր մարդուն ոչ սազական, ուստի հնարավորինս դադարեցնելու ենթակա մի վիճակ:

¹ Տե՛ս Шопенгауер А., Эристика, или Искусство побеждать в спорах // <http://home.arcog.de/rushbone/eristik.ht>

^{*} Հովհաննես Թումանյանի «Շունն ու կատուն» բալլադից:

Մեր առաջարկած՝ հասկացական այս եռանդամի պարզաբանումը ոչ միայն բարեպատեհ առիթ է մեկ անգամ ևս հիմնալու հայոց լեզվի բառակազմական անգույզական գործիքով, այլև էական դեր է խաղալու հետագա բովանդակային վերլուծության մեջ: Եվ եթե համեմատենք այլ լեզուների հետ, կհամոզվենք, որ դրանցում բավական սուղ է նմանօրինակ հասկացական տարբերական հնարավորությունը: Ռուսերենում, օրինակ, մեկ բառ է՝ «спор», և ծանոթանալով մեր խնդրո առարկային առնչվող՝ ռուսերեն առավել արժեքավոր հրապարակմանը՝ Սերգեյ Պովարնիկի «Վիճաբանության արվեստ» գրքին (առաջին անգամ լույս է տեսել 1910 թ.)², ակնհայտ է դառնում, թե որքան է բարդանում հեղինակի գործը, երբ նա փորձում է լեզվական հնարավորություններով արտահայտել բանավեճի ընթացքի որակական փոփոխությունները:

Թեպետ անգլերենում քննարկվող երևույթն արտացոլող համագործածական բազում բառեր կան, բայց տեսաբանները գերադասում են օգտագործել մեկ բառ՝ «argument», որ կարելի է թարգմանել «փաստարկ», «կռվան», «բանավեճ», «վիճաբանություն», «ապացույց»: Հատկանշական է բրիտանացի հեղինակ Մեդսեն Պիրիի «Ինչպես հաղթել ամեն մի վեճում» գիրքը³, որի ներածությունը հստակեցնում է հեղինակի նպատակադրումը. «Այս գիրքը նախատեսված է որպես գործնական ուղեցույց նրանց համար, ովքեր ուզում են հաղթել վեճերում»⁴: Ժամանակակից ամերիկյան անգլերենում նույնպես «argument»-ը բացատրվում է որպես «վիճելի հարցի կրքոտ և հաճախ բորբոքուն քննարկում»⁵, ընդ որում, հանգուցային «discussion» բառը անգլերեն–հայերեն բառարանը չի էլ կարողանում տարբերակել՝ համահավասար առաջարկելով ոչ միայն «քննարկում», այլև «բանավեճ» և «վիճաբանություն» բառերը⁶:

Ուշագրավ է ամերիկացի տեսաբան Ջեյ Հայնրիկսի մոտեցումը «Շնորհակալություն Ձեզ վիճելու համար» խոսույն վերնագրով գրքում: «Բանավեճի» համար գործածելով ավանդական «argument»-ը՝ նա «վեճը» տարբերակելու նպատակով առանձնացնում է «fight»-ը (որի առավել տարածված նշանակությունը «կռիվն» է). «Բանավեճի և վեճի հիմնական տարբերությունը սա է. հմտորեն բանավիճելիս Դուք մարդկանց մղում եք ցանկանալու այն, ինչը Դուք եք ցանկանում: Դուք վիճում եք հաղթելու համար, իսկ բանավիճում եք համաձայնության հասնելու համար... Վեճի ընթացքում մի անհատն իր ագրեսիվությունն է դրսևորում մյուսի հանդեպ»⁷:

² Տե՛ս **Поварнин С.И.**, Искусство спора. М.: Терра-Книжный клуб, Северо-Запад, 2009:

³ Տե՛ս **Pirie M.**, How to Win Every Argument: The Use and Abuse of Logic. London: Continuum, 2006:

⁴ Ibid., p. IX. Հեղինակը, միգուցե շուկայավարական նպատակներով, մի հայտարարություն է անում, որն իր բացահայտ դիրքորոշմամբ կզարմացներ անգամ հին հույն սոփեստներին. «Այս գիրքը սխալ մարդու ձեռքին ավելի շատ գնեք է լինելու, քան գիրք: Աղյախի մարդուն գիրքը սովորեցնելու է, թե ինչպես է պետք արդյունավետորեն վիճել՝ երբեմն նույնիսկ խարդախելով» (ibid., p. X):

⁵ Webster's American English Thesaurus. Springfield (Massachusetts), 2006, p. 29.

⁶ Տե՛ս Անգլերեն–հայերեն բառարան, Եր., «Հայաստան», 1991, էջ 260:

⁷ **J. Heinrichs**, Thank you for arguing. New York: Three rivers press, 2007, p. 17.

Ինչևէ, հայերենը, հիշեցնենք, ոչ միայն «բանավեճ–վիճաբանություն–վեճ» եռանդամ համակարգն ունի որպես երևույթի բովանդակային վերլուծության նուրբ գործիք, այլև (դեռ առիթ կունենանք համոզվելու) այս նույն «argument» բառն է շատ ավելի ճկուն գործադրում «փաստ–փաստարկ–փաստարկում» շղթայում:

Լեզվատրամաբանական ճշգրտումը՝ բանավեճի նախապայման

Խնդրո առարկայի և դրա էությունն արտահայտող հիմնական հասկացությունների պարզաբանումը առաջին և պարտադիր քայլն է խոսքային հաղորդակցման ամեն մի տեսակի բնականոն ընթացքի՝ զիտական քննարկում լինի, թե քաղաքական բանավեճ, դավանաբանական երկխոսություն, թե առևտրային բանակցություն: Ելակետային հասկացությունների նույնիսկ ակամա շփոթը ամենախելացի զրուցակիցներին իսկ փակուղու առջև է կանգնեցնում. միմյանց հասկանալու անպտուղ ջանքերն ամենաբարեհաճ զրուցակիցներին անգամ կարող են հունից հանել: Ուստի մենք էլ փորձենք խուսափել հաճախադեպ այդ սխալից:

Սովորաբար, բանավեճ կամ քննարկում սկսելիս, կողմերը հայտարարում են, թե իրենց նպատակը ճշմարտությունը պարզելն է, ուստի և պատրաստակամություն են հայտնում կամովին փոխելու սեփական տեսակետը, եթե պարզվի, որ իրենք սխալ են, իսկ դիմացինը՝ ճիշտ: Այս տրամադրությունն է, հավանաբար, ծնունդ տվել հայտնի ասության. «Ճշմարտությունը ծնվում է բանավեճի ընթացքում»: Սակայն, բանավեճի այլափոխմանը զուգընթաց, առավել ևս ձախողման պարագայում, այս կարգախոսը մոռացվում է, ամեն կողմ միայն ու միայն իր տեսակետն է հռչակում ճիշտ, հակառակորդին մեղադրում ճշմարտությունը չըմբռնելու և սխալ կարծիքը պնդելու համար:

«Ճշմարտությունը» տվյալ ասության համապատասխանությունն է իրականությանը, համապատասխանաբար՝ սխալը անհամապատասխանությունն է: Տրամաբանության դասագրքերում հանդիպող այս սահմանումն արդյոք անփիճելի ճշմարտություն է: Թվում է՝ հաստատական պատասխանից բացի այլ պատասխան հնարավոր չէ տալ: Բայց եկեք որոշակիացնենք՝ «Վիճաբանության արվեստը ամեն մի մշակույթի տարրն է»: Նախորդ հատվածի շարադրանքն ընթերցողին հիմք կտա եզրակացնելու, որ տվյալ ասությամբ, որպես ապացուցման ենթակա խնդրակ, արտահայտում է տողերիս հեղինակի կարծիքը, նրա վստահությունը, թե ասվածը ճշմարտություն է, այսինքն՝ համապատասխանում է իրականությանը:

Իսկ ինչո՞ւ պետք է նույն կարծիքն ունենա և անվերապահորեն դա որպես ճշմարտություն ընդունի մեկ ուրիշը՝ առավել ևս վիճաբանելու տրամադրված զրուցակիցը: Եվ եթե վերջինս, դիցուք (թեկուզ ի հեճուկս առաջին ձևակերպման հեղինակի կամ վասն վիճաբանելու ցանկության), անվարան հռչակի առաջարկված խնդրակին տրամագծորեն հակառակ մի միտք՝ «Վիճաբանության արվեստը մշակույթի հետ առհասարակ որևէ առնչություն չունի», ապա դա ակնհայտորեն սխալ՝ պիտի համարել: Տրամաբանական մտածողության դիրքերից՝ սրանք միմյանց հակասող պնդումներ են, ուստի մեկը ճիշտ է, մյուսը՝ սխալ, երրորդը բացառվում է:

Բայց տրամաբանությունը կօգնի՞ մեզ խուսափելու բանավեճից: Այս պարագայում՝ դժվար թե: Ամեն կողմի համար ճշմարիտն իր ասածն է, սխալը՝ գրուցակցինը, ուստի և արձանագրում ենք ձևական տրամաբանությանը միանգամայն անհարիր, սակայն վիճաբանության ընթացքին շատ հարազատ մի իրողություն. առկա են երկու ճիշտ և երկու սխալ դատողություններ: Հավելենք՝ առկա է նաև երկու մեղավոր. միմյանց մեղադրելը (անիրագրելության, դիմացինին ուշադիր լսելու անկարողության, անհամբերության, անհանդուրժողականության և հազար ու մի այլ բանի համար) շատ սովորական բան է վիճարկեստի հիմունքներին չտիրապետող, նաև այդ պատճառով բորբոքված գրուցակիցների շրջանում:

Հանդուրժողականության օրինակ տալով (որքա՞ն հեշտ է դա անել գրավոր մենախոսելիս, որքա՞ն դժվար՝ վիճաբանության թեժ պահին)՝ տողերիս հեղինակը պիտի ընդունի իր մեղքը: Առաջ քաշելով իր խնդրակը՝ նա պարտավոր էր հաշվի առնել հակաճառության հնարավորությունը, ուստի առնվազն պետք է կանխել թյուրըմբռնման հիմքով ծագելիք վեճը: Ամենից առաջ պարտադիր էր «մշակույթ» հասկացության ճշգրտումը տվյալ պահին, տվյալ գրուցակցի համար: Չէ՞ որ մշակույթի տարբեր ըմբռնումներ կան մշակութաբանության դասագրքերում անգամ: Արդ, եթե «մշակույթ» ասելով երկրորդ գրուցակիցը ելնում է դրա առավել նեղ ըմբռնումից՝ որպես տվյալ ազգին հատուկ արժեքների ամբողջություն, ապա իր դիրքերից միանգամայն տրամաբանական է վիճարկեստի բացառումը մշակույթի կազմից:

Այսպիսով՝ գրույցը, քննարկումը, բանավեճը սկսող կողմի կամ երկխոսությունը վարողի (միշտ էլ գերադասելի է երրորդ՝ չեզոք կողմի ներկայությունը) առաջնագույն պարտականությունն է ելակետային ըմբռնումների որոշակիացումը, քննարկման հենց նախնական փուլում հնարավոր թյուրիմացությունները բացառելը: Սա համարենք **վիճարկեստի առաջին սկզբունքը**. «Բանավեճը հեռանկար ունի, եթե սկսվում է ելակետային ըմբռնումների պարզաբանմամբ»:

Այս սկզբունքը խախտելու մեղքն իր վրա վերցրեց տողերիս հեղինակը՝ որպես առաջին գրուցակից, և, կարծեք, լռելյայն անմեղության յուրատեսակ կանխավարկած ապահովվեց երկրորդ գրուցակցի համար: Իսկ նա արդյոք բացարձակապես անմե՞ղ է և սոսկ դրսևորել է արտահայտվելու իր իրավունքը՝ այդկերպ հակադրվելով առաջադրված խնդրակին: Մի՞թե նա ևս չէր կարող կանխել թյուրիմացությունը, քննարկմանը սպառնացող փակուղին: Կարող էր, այն էլ ինչպե՞ս. երկրորդ գրուցակցի ձեռքին մի այնպիսի մոգական բանալի կա, որը չօգտագործելը նրան էլ հավասարաչափ մեղավոր է դարձնում բանավեճի ձախողման համար: Դա «Դուք ի՞նչ նկատի ունեք» հրաշալի արտահայտությունն է: Սա և՛ հարց է, և՛ ակնարկություն, և՛ ժամանակ շահելու հնարք, և՛ բարեհաճ վերաբերմունք դրսևորելու հնարավորություն, և՛ ծագող վեճը մարելու միջոց... Ընդամենը պետք էր հարցնել. «Դուք ի՞նչ նկատի ունեք «մշակույթ» ասելով», և՛ վերջ: Ավելի ճիշտ՝ հաջող սկիզբ. երկրորդ գրուցակիցը ցույց է տալիս, որ տրամադրված է լրջմիտ քննարկման, այլ ոչ՝ անպտուղ ժամավաճառության, և նույնի կոչն է անում առաջինին: Առաջադրված է համատեղ և փոխադարձ ըմբռնմամբ, կարծիք-

ների խստիվ գիտական ձևակերպումներով քննարկմամբ ճշմարտության որոնումը: Այսպիսով՝ ձևակերպենք վիճարկեստի **երկրորդ սկզբունքը**. «Լեզվատրամաբանական անհրաժեշտ ճշգրտումն ապահովելով՝ բանավեճի բարեհաջող ընթացքին նպաստում են երկու կողմերը, ձախողման համար մեղավոր են լինում երկուսն էլ»:

Բերված օրինակում առաջին գրուցակիցն էր պարտավոր ճշգրտել խնդրակը՝ բացատրել, մեկնաբանել իր միտքը, պարզել հանգուցային բառերը, չթողնել թյուրըմբռնման որևէ հիմք, բայց նաև երկրորդ գրուցակիցը պիտի նույնն աներ: Սա այն պարագայում, երբ երկու կողմն էլ իրոք հակված են ճշմարտությունը բացահայտելուն, բուն բանավեճը դիտարկում են որպես դրան հասնելու միջոց, ամենակարևորը՝ ճշմարտությունն ու սխալը քննարկելիս գերծ են կմնան սոփեստական հնարքներից:

Հակառակ պարագայում, այսինքն՝ երբ երկուստեք փորձ իսկ չի արվում առավելագույնս ճշտելու ելակետային հասկացություններն ու խնդրակի էությունը, հիմք ունենք ենթադրելու, որ վեճի են բռնվել, լավագույն դեպքում՝ մոլորյալներ, վատագույն դեպքում՝ սոփեստներ, իսկ ճշմարտության մեկնաբանումը միտված է լինելու ոչ թե խնդրակի՝ իրականությանը համապատասխանելուն, այլ առավելապես դրսևորելու է վիճաբանողների խոսքային հմտությունը:

Հասկացությունների միտումնավոր խառնաշփոթի մեջ շահագրգռված են, իհարկե, սոփեստները: Եթե խնդրակն անհստակ է ձևակերպված, հմուտ սոփեստը դյուրին կերպով, ըստ իր հայեցողության և նպատակադրման, կարող է շեղվել խնդրակից, նենգափոխել դրա էությունը, ճիշտը մատուցել որպես սխալ, իսկ սխալը՝ ճիշտ, և դեռ մի բան էլ հակառակորդին մեղադրել խառնաշփոթի համար: Հիշեցնենք, որ սոփեստությունը կանխավ հայտնի սխալ դատողության հիմնավորումն է որպես ճշմարտություն⁸: Անխմաստ է սոփեստից պահանջել այլ վարքագիծ, մեղադրել պատիր ապացուցման, անբարո վերաբերմունքի համար, ինչպես որ անում էին Պլատոնն ու Արիստոտելը⁹: Չէ՞ որ սոփեստը համոզված է, որ բանավեճի, քննարկման, հրապարակային որևէ ելույթի իմաստը դիմացինին հաղթելն է, այսինքն՝ ցույց տալ վերջինիս մտքի սխալ, անընդունելի, անհեթեթ, զավեշտական լինելը: Այնպես որ՝ սոփեստը անդրդվելի է, քանի որ հավատացած է, թե ճշմարտությունն այն է, ինչն ինքը կարողանում է այստեղ, այս պահին, այս ունկնդիրների ներկայությամբ մատուցել որպես ճշմարտություն (իսկ եթե հարկ լինի, ինքը պատրաստ է միևնույն համոզկերությամբ ցույց տալ, որ հենց նոր ասվածը միանգամայն սխալ, անընդունելի մի բան է): Եվ

⁸ Հանգամանորեն տե՛ս Վ. Միրզոյան, Ճարտասանություն, Եր., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2012:

⁹ Տե՛ս Պլատոնի երկխոսություններից հետևյալը. «Գորգիաս» (Պլատոն, Սոչ. 3-րդ տոմ, տ. 1. Մ., «Мысль», 1968, էջ 255–365), «Պրոտագորաս» (անդ, էջ 187–253), «Սոփեստ» (Պլատոն, Սոչ. 3-րդ տոմ, տ. 2. Մ., «Мысль», 1970, էջ 319–399), «Եվտիմեդես» (Պլատոն, Диалоги. Մ., «Мысль», 1986, էջ 113–157):

Արիստոտելն այս հարցերին անդրադարձել է «Հետորիկա» (Аристотель, Риторика // Античные риторика. Մ., «Мысль», 1978, էջ 15–164) և «Տոպիկա» (Топика // Аристотель, Սոչ. 4-րդ տոմ, տ. 2. Մ., «Мысль», 1978, էջ 347–531) գրքերում, բայց առավել խորը՝ «Սոփեստական հերքումների մասին» (О софистских опровержениях // Аристотель, Սոչ. 4-րդ տոմ, տ. 2. Մ., «Мысль», 1978, էջ 533–593) վերլուծական աշխատությունում:

այն, ինչը սովորաբար անձանք բանավիճողը կարող է ընկալել որպես անսկզբունքայնություն, անհետևողականություն, բարոյական ցինիզմ, ընդհակառակը՝ սովետի հպարտության առարկան է, խոսքային վարպետության վկայությունը:

Այսպիսով՝ առավել ևս կարևորվում են բանավեճի խնդրակի առավելագույն հստակեցումը, հնարավոր բոլոր թյուրիմացությունների կանխումը: Եթե խնդրակ առաջադրողը միտումնավոր է անտեսում դրա կարևորությունը, նույնիսկ հստակեցման դիտողություն-առաջարկից հետո (հիշենք «Դուք ի՞նչ նկատի ունեք» մոգական խոսքը) խուսափում դրանից, ապա մեզ համար սա պիտի տագնապի ազդանշան լինի: Ուրեմն, ամենայն հավանականությամբ, հանդիպել ենք փորձված սովետի, և բանավեճի արդյունավետությունը կասկածելի է: Այստեղից էլ՝ վիճարկեստի **երրորդ սկզբունքի** ձևակերպումը. «Բանավեճի հենց սկզբից (բնականաբար, մասամբողջ ընթացքում) հարկավոր է հասկանալ ոչ միայն ինչ է ասում զրուցակիցը, այլև ինչու է ասում, ինչ նպատակադրմամբ»:

Իսկ ինչպե՞ս ենք պարզում զրուցակցի նպատակադրումը. արդեն ասվեց՝ խնդրակը հստակեցնելու մեր առաջարկին նրա արձագանքի բնույթով: Բայց կարևոր է, որ մենք էլ չսխալվենք իրավիճակը գնահատելիս, չաճապարենք դիմացինի մասին կարծիք կազմելիս: Չէ՞ որ հնարավոր է մաս, որ նրա անհանդուրժողականությունը բացատրվում է մոլորյալի հոգեբանությամբ: Այսինքն՝ զրուցակիցը սխալվում է, սակայն, ի տարբերություն սովետի, լիովին համոզված է, որ ինքն է ճիշտը, ուստի և խնդրակի պարզաբանման պահանջը, հասկացությունների ճշտման առաջարկը նրան հունից հանում են: Մոլորությունը ներելի է, սովետությունը՝ անհանդուրժելի: Ըստ այդմ՝ հնարավորինս նրբանկատորեն բացատրում ենք մոլորվածին խնդրակի նախնական հստակեցման կարևորությունը, ինքներս օրինակ ենք ծառայում, պարզաբանում մեր դիրքորոշումը և խնդրում իր կարծիքը հայտնել:

Սովետության բացահայտման պարագայում հնարավոր է երկակի շարունակություն. կա՛մ բանավեճի հետաձգում որևէ պատրվակով, կա՛մ սովետի դեմ նրա իսկ զենքի՝ սովետական հնարքների գործադրում: Ընտրությունը պայմանավորված է բազում հանգամանքներով՝ քննարկվող հարցի կարևորությունը, մեր պատրաստվածությունը, ժամանակի սղությունը, սովետին խրատելու մղումը և այլն: Երկու լուծումն էլ ունի տրամաբանական, հոգեբանական, մշակութային հիմնավորում: Պատահական չէ Աստվածաշնչում երկու՝ արտաքուստ հակասական խորհուրդների համատեղումը. «Սի պատասխանիր հիմարին նրա տխմարության համեմատ, միգուցե դու էլ նրան նմանվես» (Առակաց, ԻԶ, 4), «Պատասխանիր հիմարին նրա տխմարության համեմատ, միգուցե իր աչքին իմաստուն երևա» (Առակաց, ԻԶ, 5): Հայոց առածանին էլ է իրավիճակային լուծման կողմնակից. «Խենթի հետ խենթ չեն ըլլա», բայց մաս՝ «Խոտորնակին՝ խոտորնակ»:

Այստեղից հետևում է պարտադրված սովետաբանությանը պատրաստ լինելու անհրաժեշտության սին եզրակացությունը՝ որպես **վիճարկեստի չորրորդ սկզբունք**. «Իմանալ սո մ մա փեստական հնարքները, բայց գործադրել դրանք միայն որպես դիմացինի սովետաբանության չեզոքացում»:

*Բանավեճի վերածումը վիճաբանության և վեճի.
կանխարգելման ռազմավարությունը*

Շարունակենք այն կանխավարկածի լույսով, երբ բանավեճի երկու կողմն էլ զերծ են մնում սուփեստական հնարքներից, պատրաստակամ են համատեղ արգասաբեր քննարկման, ձգտում են բանավեճի միջոցով պարզել ճշմարտությունը, փոխադարձաբար հարստացնել միմյանց իմացությունը խնդրո առարկայի մասին: Այս հովվերգական պատկերի, բանավեճի իդեալական կողմերի պարագայում անգամ բացառված չեն բանավեճի այլափոխումը, վերածումը վիճաբանության և վեճի: Ո՞րն է դրա պատճառը, ինչպե՞ս խուսափել դրանից: Կրկնում ենք՝ բանավեճի ձախողման մեջ առաջին բացառում ենք սուփեստական միտումնավորությունը («սուփեստ – սուփեստ» և «սուփեստ – ոչ սուփեստ» զույգերին բնորոշ իրավիճակները հետագա քննարկման նյութ են լինելու):

Բազում պատճառներ կան, բայց սկսենք գլխավորից՝ բանավեճի էությունից, ավելի ստույգ՝ դրա ներքին հակասականությունից: Բանավեճը չհամընկնող, տարբեր, հակադիր, անգամ միմյանց արմատապես բացառող կարծիքների քննական, վերլուծական համադրումն է. եթե դրանք հակադիր չլինեին, ապա բանավեճ էլ, որպես այդպիսին, չէր լինի, այլ կլիներ միևնույն կարծիքն ունեցողների հանդարտ զրույց, հրահանգավորում, տեղեկացում, ուսուցում և այլն: Հետևաբար՝ բանավիճողները հակամարտ փոխհարաբերությունների մեջ են և պիտի ամենից առաջ գիտակցեն, որ հակամարտությունը իմացական, տեսական բնույթի է, այլ ոչ թե անձնական: Ինչպես բռնցքամարտիկները մարտն ավարտելուց հետո եթե չեն էլ գրկախառնվում, ապա ձեռք են սեղմում՝ ցույց տալով միմյանց և հանրությանը, որ հենց նոր լարված, անգիջում բախման մեջ համեմատվում էին մարզական կարողությունները, ոչ թե անձնական ատելությունն էր մղում պայքարի, այդպես էլ բանավեճի կողմերը հոգեբանորեն պատրաստ պիտի լինեն ձեռքսեղմման՝ անկախ ավարտի բնույթից: Չէ՞ որ երկու կողմն էլ սեփական իմացությունն է հարստացնում, փաստարկներն ու հակափաստարկները փորձարկում, համոզելու կարողությունը ստուգում ու զարգացնում: «Հաղթանակ–հաղթանակ», ոչ թե «հաղթանակ–պարտություն». սա պիտի լինի արգասաբեր բանավեճի բարոյահոգեբանական նախապատրաստության գլխավոր կարգախոսը: Այստեղից էլ՝ վիճարկեստի հինգերորդ սկզբունքը. «Բանավեճում շահում է երկու կողմն էլ՝ և՛ «հաղթող», և՛ «պարտված»»:

Բավական է մոռանալ անձի և նրա ասածի տարբերական մասին, և բանավեճը կարող է հայտնվել վիճաբանության եզրին: Իսկ այդ վտանգը մշտապես կա, քանի որ մարդկային խոսքին առհասարակ ներհատուկ է այն, որ արդեն հայտնված կարծիքին, տեսակետին, առաջարկին մեր արձագանքը, որպես կանոն, բովանդակում է ոչ միայն սեփական կարծիքը, այլև դիմացինի կարծիքի որոշակի գնահատական՝ քողարկված կամ լիովին բացահայտ: Հենց ըստ սահմանման՝ բանավեճը չի կարող լինել լոկ տեղեկատվության չեզոք փոխանակում: Բայց և, ինքնին հասկանալի է, հակափաստարկման ընթացքում դիմացինի անձին առնչվող բացասական

որևէ գնահատական, առավել ևս դիտողություն (թեկուզ ակնարկի ձևով արված կամ առերևույթ բացասական) անմիջապես խաթարելու է բանավեճի բնականոն ընթացքը. առնվազն առաջացնելու է համապատասխան արձագանք, սա էլ, իր հերթին, արձագանքի արձագանք, և «բանի» քննարկման փոխարեն, ինչպես արդեն ասվեց, քննարկվելու են անձը, նրա վարքը, բանավիճողների միջև անցյալում առկա անձնային բնույթի ինչ-ինչ հարցեր և այլն: «Որքան էլ խիստ ու սուր լինի դիմացինի կարծիքի, նրա խնդրակի, տեսական հիմնավորումների քննադատությունը, դա երբեք չպետք է շոշափի նրա արժանապատվությունը, դույզն-ինչ նսեմացնի արժանիքները»: Սա մեր հերթական սկզբունքն է, թերևս՝ գերագույնը, կարող ենք նույնիսկ ասել՝ **վիճարկեստի հրամայականը**: Բանավեճի սկզբից մինչև վերջ, ամեն վայրկյան, ամեն մի հակաճառությունն անելիս կողմերը պետք է ենթարկվեն այս սկզբունքին:

Բայց ինչպե՞ս պահպանել այս սկզբունքը: Իհարկե, կարևոր են և՛ փոխադարձ կիրք վարվելակերպը, և՛ բարեհաճ ձայնը, և՛ մեղմ ժպիտը, և՛ ուշադիր ունկնդրումը, և՛ զսպվածությունը, և՛ հավասարակշռված քննադատությունը, և՛ արդարացի քննադատության հետ հաշտվելու տրամադրվածությունը, և՛ սեփական սխալն ընդունելու պատրաստակամությունը, և՛ համապատասխան ոճը, բազում այլ տարրեր: Բայց նշված բոլոր այդ օգտակար գործոնները, որոնց կարևորությանն առնչվում ենք կյանքի ընթացքում և որոնց մասին բազում պիտանի գրքեր կան, բանավեճի ինչ-որ X պահի մեկեն մոռացվում են: Ի՞նչ բարեհաճություն և նրբանկատ վարվեցողություն, ո՞ւմ հանդեպ: Ախր դիմացինն ակնհայտորեն սխալ է, համառում և չի ընդունում բացահայտ ճշմարտությունները, չի հարգում մեր հեղինակությունը, մեր վկայակոչած հանրահայտ հեղինակների կարծիքը, իսկն ասած... առհասարակ անընկալունակ է թվում տարրական ըմբռնումների հարցում: Խոստովանենք, որ այս հուզական վիճակում շատերս ենք հայտնվում և գրեթե պատրաստ ենք լինում անձնական որակումների անցնելու: Մենք հագիվ ենք զսպում մեզ, սկսում ենք անհամբերություն դրսևորել, զայրանում ենք, ձայն բարձրացնում... Լա՛վ, որքա՞ն կարելի է միևնույն բանը կրկնել... Սա բնական, հուզախոշիվ վիճակ է, և բանավեճի ներկայներից ո՞վ կարող է մեզ մեղադրել, եթե տեղնուտեղը մեր շիփ-շիտակ վերաբերմունքն արտահայտենք գրուցակցի մտավոր կարողությունների մասին: Չէ՞ որ ասված է. «Ձգացմունքն է գերիշխանը, խելքը՝ նրա լոկ ծառան...»:

Այստեղ երկու հանգամանք պիտի մեզ հետ պահի դա անելուց: Առաջինը՝ գիտակցումն այն բանի, որ միգուցե մե՞նք էլ ենք այդպիսին երևում գրուցակցի աչքին: Բացառվո՞ւմ է, միթե, որ հենց մենք ենք համառում մեր սխալ տեսակետով, կամ էլ՝ մեր բերած փաստարկներն են անբավարար ու անհամոզիչ: Իսկ գրուցակիցը դեռ շարունակում է հիմնավորել, համբերատար ունկնդրում է մեզ, ամենակարևորը՝ մեր համառությանն ի պատասխան անձնային վերաբերմունքի ոչ մի նշույլ չի դրսևորում: Այսինքն՝ ի տարբերություն մեր բորբոքուն վիճակի, մեզ հետ բանավիճող անձնավորությունը, թեպետ նույնպես հուզախոշիվ վիճակում է (հակառակը պնդելու ի՞նչ հիմք ունենք), բայց հետևում է բանաստեղծական տողի խորհրդին.

«...Բայց դու խելքդ վրադ պահիր, ինչպես պողպատ կոռ վահան»* :

Երկրորդ հանգամանքը (քիտում է վերոնշյալ կանխավարկածից) նույն-
քան կարևոր է՝ զրուցակիցը չի կեղծում, չի նենգափոխում ո՛չ իր, ո՛չ մեր
ասածի բովանդակությունը, չի շեղվում խնդրակից: Եվ անգամ մեր ասածին
հակառակվելիս, մեր դատողությունը սուր քննադատելիս դրսևորում է հար-
գանք ու բարյացակամություն: Սա նշանակում է, որ նա, եթե անգամ լիա-
կատար մոլորության մեջ է, ավելորդ կրքոտություն է դրսևորում, այդուհան-
դերձ, անկեղծորեն ձգտում է պարզել ճշմարտությունը, իսկ դրանում մենք
միմյանց կարիքն ունենք և այս բանավեճն էլ սկսել ենք այդ նպատակով:

Դե, ուրեմն, ուշադիր լսենք զրուցակցին, պարզենք, թե ինչպես է նա
գերծ մնում անձնական որակումներից, մեր մասին որևէ անբարենպաստ
կարծիք հայտնելուց: Ահա նա ասում է՝

- «Իհարկե, Ձեր ասածը շատ համոզիչ է, բայց ես այդ խնդիրն այլ տեսանկյունից եմ դիտարկում...»:
- «Ներողություն եմ խնդրում, բայց Ձեր միտք ինձ փոքր-ինչ վի-
ճարկելի է թվում ահա այս առումով...»:
- «Եթե դեմ չեք, խնդրում եմ, մեկ անգամ ևս կրկնեք Ձեր վերջին փաստարկի հիմնավորումը, ես լավ չըմբռնեցի...»:
- «Լավ, եթե համաձայն չեք, ուրեմն, ես այնքան էլ հաջող չա-
րադրեցի տեսակետս, կուզենայի ընդամենը հավելել, որ...»:
- «Շատ լավ, եթե ավարտեցիք, ապա կուզենայի, եթե դեմ չեք, Ձեզ
մի լրացուցիչ հարց տալ...»:
- «Դուք այդ խնդրին ակնհայտորեն ավելի քաջատեղյակ եք. եթե
հնարավոր է, խնդրում եմ բացատրել, թե ինչու...»:
- «Ներողություն, ինձ թվում է՝ մենք մի փոքր շեղվել ենք մեր հիմ-
նական թեմայից. եթե չեք առարկում, անդրադառնամք հետևյալ
խնդրին...»:
- «Ասացեք խնդրեմ, Դուք ի՞նչ նկատի ունեք դա ասելով...» և այլն:

Բոլոր այս լեզվական կաղապարները՝ մարդկանց խոսքային հաղոր-
դակցումը, հատկապես բանավեճը դյուրացնող մեղմասույթներ են (եվֆե-
միզմ): «Դուք սխալ եք» ճակատային ձևակերպման փոխարեն ասում ենք.
«Ես Ձեր ասածը լավ չհասկացա»: «Որքան կարելի է համառել» անսքող
մեղադրանքի փոխարեն ասում ենք. «Խոստովանում եմ՝ ինձ հիացնում է
Ձեր սկզբունքայնությունը, բայց, այդուհանդերձ, չեմ կարողանում ըմբռնել
Ձեր այս վերջին դատողության կապը քննարկվող թեմայի հետ...»: Փո-
խանակ ուղղակի զարմանք արտահայտելու, թե տվյալ ասպարեզում փորձ-
ված մասնագետի համարում ունեցողն ինչու է նման պարզունակ բաներ
ասում, գերադասում ենք՝ «Ես, իհարկե, Ձեր չափ փորձառություն չունեմ
(իրագել չեմ, տեղյակ չեմ տվյալ հարցին և այլն), բայց ինձ փոքր-ինչ վի-
ճելի է թվում Ձեր այն պնդումը, թե...» անվտանգ արտահայտությունը:
Ահա այսպես խուսափում ենք դիմացինին թեկուզ ականա կոպտելուց, վի-
րավորելուց (անգամ՝ թվացողությունից), իսկ ասվածի մեջ սպրդող անձ-
նային որակավորման սլաքն ուղղում ենք դեպի մեզ: Հետևաբար՝ «Չկա

* Ավետիք Իսահակյանի «Կտակը» բանաստեղծությունից:

որևէ հակափաստարկ, հակաճառություն, քննադատություն, որ հնարավոր չլինի անել վերանձնական ձևով»: Սա նույնպես կարող է լինել վիճարկես-տի՝ սույն համարակալմամբ յոթերորդ սկզբունքը: Իհարկե, այսօրինակ արտահայտությունները հայտնի են անգամ միջին պատրաստվածությամբ բանավիճողին, բայց խնդիրը դրանք տեղին գործածելն է՝ հանուն բանա-վեճի կանոնավոր ընթացքի:

Ի՞նչն է ամենից ավելի խանգարում խոսքային արդյունավետ հաղորդակցման ճիշտ կազմակերպմանը, մասնավորապես՝ արգասաբեր բանա-վեճին: Դարձյալ պատճառները բազում են՝ շտապողականություն, վատ ունկնդրում, միմյանց հանդեպ կանխակալ վերաբերմունք, բարձր ինքնա-գնահատականը պահպանելու դիրքորոշում, քննադատության հիվանդագին ընկալում, ակամա սպրդած որևէ հեզմական արտահայտություն, լեզվական տարատեսակ թյուրիմացություններ, բանավեճին ներկա հանդի-սատեսի հավանությանն արժանանալու ձգտում և այլն:

Առավել վնասակարը, սակայն, համառ միակողմանիությունն է, որ երբեմն զրուցակիցներին դարձնում է միանգամայն խուլ միմյանց փաստարկների հանդեպ: Ծայրահեղ, անգիջում միակողմանիության պարագայում առհասարակ բանավեճ չի կարող կայանալ, մեկեն անցում է կատարվում վիճաբանությանը, ապա՝ վեճին: Կարո՞ղ էին արդյոք միմյանց հասկանալ արևելյան հին առակի այն չորս կույրերը, որ դեմ էին առել փղին ու վիճում էին. մեկն ասում էր՝ պատ է, մյուսը՝ կոճղ, երրորդը՝ օձ, վերջինն էլ՝ թուփ: Ոչ մեկը չէր էլ փորձում հասկանալ, թե մյուսն ինչու է այլ կարծիք հայտնում, ուստի այսօրինակ «քննարկման» ավարտը կանխատեսելի էր.

Ու աղմըկելով ամեն միմը ջուկ,

Ինչպես որ եկել

Դեմ էին ընկել,

Էնպես էլ կույր-կույր ետ դարձան կրրկին –

Սարի պես փիղը պարզ լուսի տակին*:

Միգուցե ոչ այսպես ցայտուն, սակայն իրական կյանքում ևս «կույր», դրա պատճառով էլ միմյանց ասածի հանդեպ «խուլ» զրուցակիցների ցավալիորեն հաճախ ենք հանդիպում: Հայաստանյան քաղաքական քննարկումներում, խորհրդակցություններում, հեռուստահաղորդումներում, նույնիսկ գիտաժողովներում, երբեմն էլ՝ ատենախոսությունների հրապարակա-յին պաշտպանության ժամանակ բանավեճերը դեռ չսկսված, ավարտվում են, քանզի շեշտակի է լինում անցումը վեճի փուլին:

Եվ այս երևույթը բնավ նոր չէ: Մրա մասին մտահոգ՝ Գարեգին Նժդեհը նկատել է, որ «հայկական վեճը ընդհանրապես թշնամացնում է եւ ոչ թէ համոզում», որ առհասարակ մեր միջավայրում «բանակոռուղներին ցուա-գինօրէն պակասում է տարրական բարեկրթութիւն, պարկեշտութիւն, ար-դարախոհութիւն»¹⁰: Հայոց մեծերից Գրիգոր Զոհրապն էլ է անդրադարձել վիճաբանության այդ անընդունելի եղանակին՝ դա ուղղակի որպես պա-հանջ ձևակերպելով. «Իրար քննադատելու այս եղանակը պէտք է այլեւս

* Հովհաննես Թումանյանի «Կույրերի կարծիքը» մշակումից:

¹⁰ Գ. Նժդեհ, Որդիների պայքարը հայրերի դեմ, «Մեկանիկ», 1927, էջ 45-46:

փոխել»¹¹: Եվ ինքն էլ հենց նշում է այն հիմնական արատը, որ վերն անվանեցինք համառ միակողմանիություն: Բանավեճի առարկայական հիմքը ենթադրում է կողմերի փաստարկների իմացություն, բայց եթե մենք միայն մերը գիտենք, միայն մերն ենք ընդունում, ապա դրանով անկարող ենք դառնում հասկանալու դիմացինի հակափաստարկման մեջ առկա օգտակար, համենայնդեպս անփիճելի տարրերը: Ահա և Ջոհրապը հորդորում է հիշել, որ «դիմացի կողմն ալ խիստ կարեւոր առարկութիւններ ունի, զորս արժէքէ զուրկ ենթադրելը՝ անխոհեմ ինքնավստահութիւն միայն կրնայ կոչուիլ»¹²: Վերջապես, հարյուր տարի է գրեթե, ինչ հայ մտավորականության տրամադրության տակ է այդ անխոհեմ ինքնավստահության կործանարար հետևանքների մի հանճարեղ վերլուծություն, համաշխարհային գրականության ոսկի էջերին արժանի մի գիրք՝ Երվանդ Օտյանի «Ընկեր Բ. Փանջունին» (բնավ պատահական չէ, որ խորհրդային տարիների պարտադրված միակողմանիության պայմաններում գիրքը արգելվածներից էր): Այս ձախավեր քարոզիչը բացեիքաց հայտարարում է այն, ինչը մերօրյա քաղաքական գործիչների լուռ համոզմունքն է. «Ինչ որ ձեր նախապաշարյալ ու հետադիմական գանկերու համար տարօրինակ ու անբացատրելի կ'երևա, մեր գիտական ուղեղներու համար շատ պարզ ու բնական է... Չիք ուղղություն և ճշմարտություն արտաքու մեր կուսակցության»¹³:

Մեջբերումների այս փունջը (որ լրացուցիչ հիմնավորում է «Վիճարվեստը՝ որպես մշակույթի տարր» խնդրակը) հնարավորություն է ընձեռում ձևակերպելու վիճարվեստի կարևոր սկզբունքներից ևս մեկը՝ ութերորդն ու վերջինը սույն հոդվածում: «Որքան ավելի գիտուն և շրջահայաց է բանավեճի մասնակիցը, այնքան ավելի դյուրին է խուսափում համառ միակողմանիության սխալից»:

Ինքնին հասկանալի է, որ սկզբունքները վարվելակերպի առավել ընդհանուր, ինչ-որ առումով վերացական բանաձևումներն են: Դրանք միս ու արյուն են ստանում արդեն որոշակի կանոնների գործադրմամբ, որոնց հանգամանալից բննարկումն այլ հոդվածի նյութ է: Նշենք միայն, որ «կանոն» ասելով չպետք է հասկանալ միայն տրամաբանության և ճարտասանության դասագրքերում եղած հստակ ձևակերպումները: Կանոնի արժեք ունեն նաև բոլոր խորհուրդները, պատվիրանները, դիտարկումները, առածներն ու ասացվածքները, որ մեզանից առաջ ապրած և խոսքային հաղորդակցման բարելավման շուրջ մտորած մարդկանց փորձի խտացումն են, հույժ պիտանի նաև այսօր՝ հանրային համակեցության բնականոն կարգավորման համար:

¹¹ Գ. Ջոհրապ, Երկերի ժողովածու, հ. Ե., Եր., 2004, էջ 282:

¹² Գ. Ջոհրապ, Երկերի ժողովածու, հ. Դ., Եր., 2004, էջ 161:

¹³ Ե. Օտյան, Ընկ. Բ. Փանջունի, Եր., «Հայաստան», 1989, էջ 246, 247:

ВАЛЕРИЙ МИРЗОЯН

*Профессор кафедры „Менеджмента”
АГЭУ, доктор философских наук*

Эристика: сущность и некоторые принципы.– По античной традиции «эристику» – искусство спора – часто отождествляют с софистикой. Это верно лишь в отношении той стадии спора, когда стороны стремятся не к выяснению истины посредством сравнения собственных аргументов и контраргументов, а к победе любой ценой. Тогда, действительно, логика отступает на задний план, и спор приобретает характер неуступчивой конфронтации и софистической манипуляции. Однако, предметом эристики являются также и вопросы организации серьезного, научного спора, где спорящие сознательно воздерживаются от софистики.

В данной статье сформулированы некоторые принципы ведения именно подобного спора. Это, в частности, обеспечение предварительного логического анализа сути тезиса во избежание дальнейшей лингвистической путаницы; направленность критики только на аргументы противной стороны, не затрагивая ее личностных характеристик; осознание того, что в споре выигрывают обе стороны, поскольку обогащают свои знания о предмете спора, уточняют и расширяют аргументацию и т.д.; необходимость знания всех софистических уловок, но их использование только как средство нейтрализации софистских поползновений противной стороны; исключительно воздержание от ошибки исключительно одностороннего рассмотрения обсуждаемой проблемы из-за некритической переоценки обоснованности собственной позиции и др.

VALERI MIRZOYAN

*Professor at the Chair of
„Management” at ASUE,
Doctor in Philosophy*

Eristic: the Essence and Some Principles.– The ancient tradition observes «Eristic» as a sophistic way of arguing. But it is true only for some sorts of arguing. In the frame of this article eristic is interpreted as a special domain of science and art, an effective regulating tool for any discussion within interpersonal communication. It is very important to distinguish three stages or three types of arguing. First – when both sides equally seek for the truth, and obey the laws of logic, and do not use sophistical technics; second – when the participants digress from primary thesis of arguing and begin manipulating through data and arguments, third – they almost don't remember the goal of discussion, and completely disagree with the opposite side without any logic and sometimes insult each other. The last two types are, in fact, something like confrontation, quarrel or fighting, but not real arguing.

In this investigation the author formulated some arguing principles (mainly for first type of arguing). Those are, for instance, the necessity of logical precision of the thesis's essence for the sake of avoiding future linguistic disorder; during criticising the opposite position one needs to separate arguments from personality; good knowledge of all sophisticated tricks, but using them only for neutralizing the sophistic attempts of the opposite side; understanding the dangers of unilateral approach and overvaluation of own argumentation; the preference of the „win-win” rule compared to the „win-lose” rule and etc.